ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ <<ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 7 ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ

<<Ալավերդի համայնքի Ամալյա Կարապետյանի անվան թիվ 7 մսուր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ֆիզ.հրահանգչի (0,5 դրույք) և մեթոդիստի (1 դրույք) պաշտոնների համար:

Ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի հաստիքի համար մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով ունի միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ:

Մեթոդիստի հաստիքի համար մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով ունի բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1)՝լրացվում է տեղում,

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձև 4)՝

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթն անց է կացվելու 2026 թվականի օգոստոսի 25–ին, ժամը 10:00-ին՝ ֆիզ.հրահանգչի պաշտոնի համար, ժ. 13:00 –ին՝ մեթոդիստի պաշտոնի համար, ք. Ալավերդի Թբիլիսյան խճ. 5/2 հասցեում: Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են 2026 թվականի հուլիսի 24–ից մինչև 2026թ-ի օգոստոսի 20-ը ներառյալ, ամեն օր ժամը 08:30 - 17:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից ք. Ալավերդի, Թբիլիսյան խճ. 5/2 հասցեում: Մրցույթն անց է կացվելու երկու փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ https://escs.am/am/news/11978

Տեղեկությունների համար կարող եք զանգահարել +374 99 250 182 հեռախոսահամարով